



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

5 նոյեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Դիլանյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Հովիկ Եսայանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց .

1. Հովիկ Եսայանը 2019 թվականի հոկտեմբերի 16-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով. «... ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 08.07.2005թ. թիվ 95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 4.9 և 4.13 կետերը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող նորմատիվ իրավական ակտ»:

2. Դիմողը նշում է, որ դատարանները կայացրել են ակնհայտ ապօրինի որոշումներ, որոնցով խախտվել են Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի, Կոնվենցիայի 6.3-րդ հոդվածի 1-ին մասի, 13.1 հոդվածի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի պահանջները:

Սահմանադրական դատարանի դիմելու համար սահմանված ժամկետի պահպանվածության և դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած լինելու հանգամանքները հիմնավորելու համար դիմողը որպես վերջնական դատական ակտ է դիտարկում ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշումը, որը կայացվել է 2019թ. սեպտեմբերի 18-ին:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության, ինչպես նաև լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, դատական (այդ թվում՝ սահմանադրական) պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոնները ինքնանպատակ չեն և հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող, քանզի դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական (Սահմանադրությամբ և Օրենքով նախատեսված) գործընթացներ, ինչը պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով: Հետևաբար, դիմողը Սահմանադրական դատարանում պարտավորված է կատարելու այնպիսի գործողություն-

ներ, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Սահմանադրական նշյալ նորմի հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով մանրամասնվում և կանոնակարգվում են անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական և օրենսդրական պահանջները: Դրանց սահմանումն ինքնանպատակ չէ և միտված է Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացման ապահովմանը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը կրկնում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի նորմը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, կամ դիմողը չի սպառել դատական պաշտպանության

բոլոր միջոցները, կամ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:

Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողի միակ փաստարկն այն է, որ դատարանները կայացրել են, դիմողի կարծիքով, ակնհայտ ապօրինի դատական ակտեր: Այսինքն՝ ձևականորեն բարձրացնելով սահմանադրականության խնդիր՝ դիմողն իրականում բարձրացնում է դատական ակտի իրավաչափության հարց, որի քննությունը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասությունից:

Բացի դրանից, ՀՀ վարչական դատարանն իր 25.01.2019թ. որոշմամբ որոշել է «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 4.9 և 4.13 կետերը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու պահանջի մասով դիմումի ընդունումը մերժել, իսկ «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 4.9 և 4.13 կետերը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին հակասող և անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ վերադարձնել՝ ժամկետ սահմանելով թույլ տված սխալները վերացնելու և դիմումը կրկին ներկայացնելու համար:

Դիմողի գործով վերադաս ատյանների բոլոր դատական ակտերը վերաբերում են «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 4.9 և 4.13 կետերը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու պահանջի մասով դիմումի ընդունումը մերժելուն, իսկ «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 4.9 և 4.13 կետերը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին հակասող և անվավեր ճանաչելու պահանջի մասով դիմումում թույլ տրված սխալները վերացնելուց հետո դիմողը դիմումը կրկին ներկայացրել է ՀՀ վարչական դատարան, որն էլ իր՝ 15.02.2019թ. որոշմամբ դիմողի դիմումը «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 4.9 և 4.13 կետերը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին հակասող և անվավեր ճանաչելու պահանջի մասին ընդունել է վարույթ, սակայն, դեռևս դատական ակտ չի կայացրել: Այսինքն՝ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, ինչը վկայում է այն մասին, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝

«Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» 2019թ. սեպտեմբերի 18-ի որոշումը չի կարող դիտարկվել որպես վերջնական դատական ակտ:

Ավելին, այն չի կարող դիտարկվել որպես դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում նաև այն պատճառով, որ դրանով ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության՝ վճռաբեկ բողոքն անհարգելի պատճառներով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացնելու հիմքով: Վերջինս վկայում է այն մասին, որ դիմողը պատշաճ կերպով չի օգտվել իր դատավարական իրավունքներից, ինքն իրեն զրկել է օրենքով իրեն ընձեռված՝ դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելու հնարավորությունից:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Հովիկ Եսայանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



5 նոյեմբերի 2019 թվականի
ՍԴԴԿՈ-61